**Շախմատ գիտահետազոտական ինստիտուտ**
Ուսուցիչների Պարտադիր Ատեստավորում

# Հետազոտական աշխատանք

**Հետազոտության թեման՝**

## Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողի կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

**Հետազոտող ուսուցիչ՝ Սամվել Պալոյան**
**Արմավիրի մարզի Մուսալեռի Ֆր.Վերֆելի անվան միջնակարգ դպրոց**
**Հետազոտության ղեկավար՝ Վահան Սարգսյան**

**ԵՐԵՎԱՆ-2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**1. Ներածություն**
**2. Հեազոտության թեմայի արդիականությունը**
**3. Հետազոության նպատակը**
**4. Հետազոտության խնդիրը**
**5. Գրականության ակնարկ**
**6. Հետազոտության ընթացքը**
**7. Ամփոփում**
**8. Եզրակացություն**
**9.Օգտագործված գրականության ցանկ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռևս հին ժամանակներից երեխաների դաստիարակության գործում առաջնությունը տրվում էր ուսուցիչներին՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առանձնահատկությունները: Այժմ, երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ու ղղված է անձին, ուսումնական հաստատու -թյունում կրթական ծրագրերը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սովորողի անհատականությունը: Իսկ ինչ պես հայտնի է, անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում, և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Շատ հաճախ կարելի է կարծիք լսել, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա իսկապես այդպես է. հիմնական բնավորության գծերը կամ գենետիկորեն դրված են, կամ ձևավորվու մ են ծնողների ազդեցության ներքո մանկության տարիներին: Սակայն այս ամենը չի նվազեցնում դպրոցի դերը անձի ձևավորման և դաստիարակության գործում:

Երեխայի կրթության և դաստիարակության հիմքերը, որոնք դրվել են ծնողների կողմից, կարող են ինչպես խարխլվել, այնպես էլ ամրանալ դպրոցական միջավայրում՝ դասարանական թիմի, ուսուցիչների և դասղեկի օգնությամբ:

Ուսուցիչ -ծնող համագործակցությունն այսպիսով կրթական գործընթացի կարևոր գործոններից մեկն է: Երբ ընտանիքը և ուսումնական հաստատությունն աշխատում են համագործակցված, հնարավոր է դառնում կազմակերպել երեխայի կարողություններ – ին ու կարիքներին արձագանքող կրթություն, ինչի արդյունքում շահում է հենց երե -խան: Այս նախադրյալներն են նպաստում, որպեսզի դպրոցն ու ընտանիքն ու նենան միանման սպասումներ ու օժանդակեն երեխայի ուսման գործընթացին: Նշված համագործակցության արդյուքում շահում են ոչ միայն երեխան ու ծնողը, այլ նաև դպրոցը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամանակակից շրջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող-ուսուցիչ–ուսումնական հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ու սումնառության որակի բարձրացման վրա: Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ–ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն երևույթներն արմատախիլ անելու և, գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում, նրանք են կրում երեխայի զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց-ընտանիք համագործակցության կայացումը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև:
- ✓ Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացում, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ , ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- ✓ Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալականացման, դաստիարակության և կրթության համար:
- ✓ Ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

- ✓ Հետազոտության համար որպես խնդիր եմ սահմանել ծնող-ուսուցիչ համագործակցության՝ կրթության որակի վրա ունեցող բացառապես դրական ազդեցության կարևորումը:
- ✓ Ինչպե՞ ս ներգրավել ծնողներին տարրական, միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման գործընթացին:
- ✓ Ինչպե՞ ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործընթացին :

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

**Ուսուցիչ –ծնող համագործակցության դերը, սկզբունքները և ուղղությունները երեխայի կրթության կազմակերպման գործընթացում.**

Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի կամ նրաօրինական ներկայացուցչի հետ սովորողի առաջադիմության ու զարգացման կարևոր նախապայմաններից է: Ինչպես ասում է հին դպրոցական աֆորիզմը՝ «Երեխաների հետ աշխատել ու ամենա-դժվարին մասը նրանց ծնողների հետ աշխատանքն է»:

**Ուսուցիչ-ծնող համագործակցության դերը.**

Երեխայի զարգացման գործընթացում ընտանիքը այն կարևորագույն օղակն է , որտեղ տեղի է ունենում ամենակարևորը՝ երեխաների ծնունդն ու դաստիարակու թյունը, հասարակության ապագա անդամների նյութական և հոգևոր արժեքների ստեղծումն ու որպես անձ ձևավորու մը: Հայտնի է , որ ընտանեկան միջավայրում տեղի է ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, դերային և վարքագծայինկարծրատիպերի , արժեքային համակարգերի և աշխարհայացքի ձևավորվումը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության և կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, ապահովում հոգեբանական հանգստություն ու հարմարավետություն : Սակայն, երբ երեխան դառնում է դպրոցահասակ, դաստիարակման և կրթման գործընթացը տեղափոխվում է կրթական հաստատություն: Այս փուլում ընտանիքը հանդիսանում է այն սոցիալական միջավայրը, որտեղ երեխան դպրոցում անցկացրած ժամերից հետո փորձում է վերլուծել օրվա իրադարձությունները, տպավորությունները և տեղեկությունները :

Հատկանշական է, որ դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերված սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են դժվարությունների դրսևորմանը, այդ իսկ պատճառով ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում եղել և մնում է միշտ արդիական :

Երեխայի կյանքում կրթական հաստատության առաջացումը չի նվազեցնում ընտանիքի դերի կարևորությունը, ուստի շատ կարևոր է , որ **ընտանիքն ու դպրոցը հանդես գան որպես գործընկերներ**, քանի որ դպրոցների, ծնողների, սովորողների և մասնագետների միջև համագործակցությունը կրթական գործընթացի կարևոր գործոններից մեկն է հատկապես ներառական կրթության պայմաններում, երբ հաջողությունը կախված է կրթության գործընթացին մասնակող բոլոր օղակներից և մարդկանցից :

Երբ ծնողի ներգրավվածությունը երեխայի կրթության կազմակերպման գործընթա - ցում հասնում է նվազագույն մակարդակի, ընտանիքը դուրս է մղվում երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից, և նրան կարծես տրվում է միայն մասնագիտական կարծիք լսողի դերը: Մանկավարժական աշխատողները երեխայի գնահատականների , ծրագրային նպատակների վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելիս օգտագործում են մասնագիտական բառապաշար, որը ոչ միշտ է հաս - կանալ ի ընտանիքի անդամներին և անուղղակի ուղերձ է առայն, որ նրանք թիմի անդամ չեն: Արդյունքում համագործակցություն տեղի չի ունենում: Այս խնդիրների հաղթահարման միակ ճանապարհը ընտանիք-դպրոց կապի զարգացումն է, ընդ որում՝ այդ գործընթացի առանցքային տարրը մասնագետների, ուսուցիչների , սովորողների և ծնողների միջև դրական փոխհարաբերություններն են: Երբ դպրոցի և ծնողների միջև հարաբերությունները հաստատվում են, որոշ ժամանակ անց ընտանիքում ձևավորվում են մասնագետների հետ աշխատելու հմտություններ :

Այսպիսով՝ ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը պետք է հետաքրքրված լինի ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ընտանիքի և դպրոցի

համագործակցության արդյունքում տեղի է ունենում ընտանիքի դերի փոփոխություն: Ընտանիքի դերը վերափոխվում է երեխայի ուսումնառության պլանավորման գործընթացին վերաբերվող տեղեկատվությունը պասիվ ստացողից՝ դառնալով ակտիվ մասնակից: Այս փոփոխության կարևորությունն այն է , որ ընտանիքի անդամները կարող են ավելի նշանակալի ազդեցություն ունենալ երեխայի կրթական առաջընթացի վրա:

Մ. Երմոլովայի հետազոտությունները փաստում են , որ երբ ծնողներն ակտիվ մասնակցում են ուսուցման գործընթացին, երեխան ցուցաբերում է ավելի բարձր առաջադիմություն, դրական վարք, հարգալից վերաբերմունք դասընկերների , դպրոցի և ուսուցիչների հանդեպ, ունենում է հավատ սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ, ինչն էլ խթանում է նրանց ակտիվությունն ու մասնակցությունն ուսուցման գործընթացու մ: Փորձը ցույց է տալիս, որ ծնողների և ուսուցիչների շփման և արդյունավետ համագործակցության արդյունքում նկատվում են սովորողների կայուն և շարունակական ձեռքբերումներ, նրանց մոտ ավելի արագ են ձևավորվում և զարգանում սոցիալական հմտությունները , վարքը դրականորեն է վերափոխվում ինչպես տանը , այնպես էլ դպրոցում: Այդ հմտությունները կարևոր են ինչպես դպրոցական գործունեության համատեքստում, այնպես էլ ապագա մասնա - գիտական գործունեության ընթացքում: Հենց այս պարզ պատճառով էլ դպրոցը պետք է ստեղծի բարենպաստ և հարմարավետ միջավայր ուսումնական գործընթացի սահուն և արդյունավետ իրականացման համար , որտեղ երեխան կարող է ունենալ բազմաթիվ հետքրքրություններ, լինել նախաձեռնող, մասնակցել մի շարք որոշումների կայացմա - նը, սովորել ինքնապաշտպանություն և այլն :

Ընտանիքի և դպրոցի համագործակցության գործընթացը ենթադրում է միասնական մոտեցու մներ և պարտավորություններ երեխայի կրթական գործընթացու մ:

Համագործակցության ընթացքում դպրոցը պետք է ներգրավի ծնողներին դպրոցական միջավայրու մ՝ թու յլ տալով նրանց ակտիվ մասնակցել դպրոցի կազմակերպած միջոցառումներին կամ երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը ՝ հանդես գալով որպես լիիրավ գործընկերներ: Այս գործընթացը նաև նպաստում է ծնողավարման հմտությունների զարգացմանը: Համագործակցության արդյունքում փոփոխվում են ծնողների սոցիալական, հուզական և անձնային հատկանիշները . նրանք սկսում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաներին, դառնում են ավելի հոգատար, ինքնավստահ, գնահատում են երեխայի ձեռքբերումները, ավելի մեծ ուշա - դրու թյուն դարձնում նրա սոցիալական, հուզական և մտավոր զարգացմանը, հաճույ-քով միանում են երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին, ինչպես նաև դրական հարաբերություններ են ստեղծում իրենց երեխայի ուսուցիչների հետ:

Համագործակցությունը դրականապես է անդրադառնում ոչ միայն սովորողի ընտա-նիքի վրա, այլև դպրոցի վրա, քանի որ ուսուցիչներն ավելի ինքնավստահ են դառնում, ձևավորվում է հարգանք սեփական մասնագիտության և կատարված աշխատանքների նկատմամբ, աճում է դպրոցի հեղինակու թյունը հասարակության մեջ, դպրոցական ծրագրերը դառնում են ավելի հաջողված :

Այսպիսով՝ ուսուցիչ – ծնող - մասնագետ համագործակցության նպատակն է խրախուսել կայուն, շարունակական և արդյունավետ գործունեություն դպրոցական համայնքի բոլոր անդամների միջև՝ ուսուցիչ, մասնագետ, ծնող և սովորող:

## ԵՐԵԽԱ-ԾՆՈՂ, ՄԱՍՆԱԳԵՏ-ԾՆՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՃԱԽԱԿԻ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ

«Կրթության մեջ ամենակարևորը երեխայի հոգեկան ակտիվությունն է, որով նա ճանաչում է իր ներաշխարհը, կարողանում է հաստատել իր ներքին հոգեկան արժանապատվությունը և ազատությունը.» Կ. Դ. Ուշինսկի:

Երեխա-ծնող, մասնագետ - ծնող փոխհարաբերություններում հաճախակի կիրառվող մեթոդներից ամենաարդյունավետը կարելի է համարել «Ե՛վ ինձ, և՛ քեզ» մեթոդը, քանի որ

- փոխհարաբերությունները կառուցվում են ոչ ուժային պայմաններում
- մեթոդը մոտիվացնում է երեխային պրոբլեմային իրավիճակում արագ լուծումներ գտնելուն
- նպաստում է միմյանց հանդեպ վստահության, փոխհամաձայնության և համագործակցության առաջացմանը
- ծնողը, երեխան և մասնագետը համատեղ լուծում են իրենց առջև դրված խնդիրը
- մեթոդն ունի թերապևտիկ ազդեցություն
- չկան լիդերներ, այլ կան երկու իրավահավասար կողմեր

«Ե՛վ ինձ, և՛ քեզ» մեթոդի կիրառման համար առաջադրվում են հետևյալ հիմնական քայլերը.

1. Որոշակիացնել կոնֆլիկտը:
2. Դուրս բերել այլընտրանքային հնարավոր լուծումներ:
3. Գնահատել այդ լուծումները:
4. Ընտրել ամենահավանականն ու կիրառելին:
5. Ելքեր գտնել այն կյանքի կոչելու:
6. Հետևել և գնահատել՝ ինչպես է աշխատում այդ որոշումն իրական կյանքում:

Ի վերջո շահում է այն աշակերտը, ում ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում: Այդ աշակերտը հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի:Շահում է այն աշակերտը, ում ծնողը ավելի դրական է տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունի, ցուցաբերում է դրական վարք, դրական հարաբերություններ ունի ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ: Շահում է ուսուցիչը, քանի որ բարձրանում է հարգանքը սեփական մասնագիտության նկատմամբ, բարձրանում է ինքնավստահությունը, բարձրանում է աշխատանքի մոտիվացիան, ստանում է սպառիչ տեղեկություն աշակերտի մասին: Շահում է դպրոցը. բարձրանում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ:

### Երեխայի հետ բարենպաստ փոխհարաբերությունների կառուցում

Երեխայի կրթությունը խթանվում է այն ընտանիքում, որտեղ առկա են երեխային արժևորող հարաբերություններ: Երեխային երբեք չպետք է համեմատել այլ երեխաների հետ, նա պիտի համեմատվի միայն իր լավագույն ներուժի հետ և միշտ ունենա արժևորված լինելու զգացում:

**Երբ երեխան փորձում է ուշադրություն գրավել, փորձեք՝**

➢ հնարավորության դեպքում «չնկատել» վատ վարքը, սակայն ցույց տալ ձեր

սերը, հոգատարությունն ու ուշադրությունը ավելի հանգիստ իրավիճակում,
➢ ավելի շատ ժամանակ անցկացնել երեխայի հետ,
➢ անկեղծորեն հետաքրքրվել նրա համար սիրելի զբաղմունքով, խաղալիքով կամ ընկերոջով,
➢ նայել երեխային, երբ նա խոսում է ,
➢ ավելի շատ գրկել, փաղաքշել երեխային:

**Երբ երեխան անհամարժեքության զգացում է արտահայտում, փորձեք՝**

➢ խուսափել անհամաձայնություն կամ քննադատություն արտահայտելուց,
➢ մեղմել ձեր ակնկալիքներն ու սպասումները,
➢ կենտրոնանալ ունեցած հաջողությունների վրա,
➢ խրախուսել երեխային արդեն կատարած աշխատանքի համար,
➢ տալ երեխային սխալվելու «իրավունք»,
➢ առաջադրանքը բաժանել փոքր մասերի՝ ուղղորդելով երեխային սկսել հեշտերից:

**Եթե երեխան զգայական թերսնուցում է զգում, փորձեք՝**

➢ հայտնաբերել նրա հետաքրքրությունները և համապատասխան զբաղմունք առաջարկել ,
➢ կրճատել ազատ և միապաղաղ ընթացող ժամանակը ,
➢ ակտիվացնել երեխայի շփումը հասակակիցների հետ,
➢ նրան ներգրավել առօրյա զբաղմունքներում՝ խնդրելով նրա օգնությունը:

**Եթե երեխան զգայական ծանրաբեռնվածություն է զգում, փորձեք՝**

➢ ուշադրություն դարձնել այն զգայական ազդակներին, որոնց պարագայում երեխան դյուրագրգիռ վարք է դրսևորում և նվազեցնել դրանք ,
➢ պարբերաբար ապահովել հանգիստ, անաղմուկ և բնական լուսավորությամբ միջավայր երեխայի հանգստի համար,
➢ երեխայի սեղանը (սենյակը, տունը ) պահել կոկիկ վիճակում՝ ազատելով ավելորդ իրերից, պայծառ գույներից, մանր առարկաներից և այլն:

**Երբ երեխան անարդարության զգացում է արտահայտում(վրեժ է լուծում), փորձեք՝**

➢ զերծ մնալ հակահարվածներ տալուց և չմտնել վրեժ լուծելու փակ օղակի մեջ ,
➢ անկեղծ լինել ինքներդ ձեզ հետ, վերանայել ձեր քայլերը,
➢ ընկերական վերաբերմունք դրսևորել երեխայի հանդեպ,
➢ համագործակցել երեխայի հետ՝ լուծելու նրա խնդիրները,
➢ խրախուսել երեխային՝ ցույց տալով, որ նա սիրված և հարգված է:

**Երբ երեխան բացասական հաստատու մ է դրսևորում, փորձեք՝**

➢ զերծ մնալ երեխայի բացասական արդյունքները հաստատող արտահայտություններից,
➢ օգտագործել դրական հաստատում պարունակող արտահայտություններ,
➢ անկեղծ վստահություն ցուցաբերել երեխայի անձի և նրա կարողությունների նկատմամբ,
➢ զերծ մնալ իշխանության համար պայքարի մեջ մտնելուց, երբ երեխան փորձում է ինքնահաստատվել :

**Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված սկզբունքներին՝**

➢ **Վստահել:** Ծնողների հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսում է վստահությունից: Կարևոր է, որ ուսուցիչները վստահեն ընտանիքին, իսկ ընտանիքներն էլ իրենց հերթին պետք է վստահի ուսուցիչներին, և ակտիվ մասնակցություն ցուցաբերեն իրենց երեխայի կրթության ու զարգացման գործընթացին: Երբ ծնողը ինչ-որ բան է պատմում ուսուց ին, պետք է վստահեցնել նրան, որ այդ տեղեկությունը գաղտնի է :

➢ **Արդյունավետ հաղորդակցում** հասաատելը թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները: Երբ ուսուցիչը խոսում է ծնողների հետ, պետք է հարցեր տա ոչ միայն ու սումնական բնագավառներից, այլև աշակերտի հետաքրքրություններից: Հարցերի միջոցով ուսուցի ը կարող է տեղեկատվություն հավաքել ոչ միայն աշակերտի, այլ նաև նրա ընտանիքի վերաբերյալ :

➢ **Համագործակցել:** Համագործակցող կողմերը ընդհանուր եզրեր պետք է գտնեն հաջողության հասնել ու համար ընդհանուր նպատակներ սահմանելիս: Երբ առաջանում է որևէ խնդիր, դժվարություն, պետք է այն քննարկել ծնողների հետ: Պարբերաբար շփվեք ծնողների հետ, և նրանք էլ իրենց հերթին կներկայացնեն ձեզ այն խնդիրները, դժվարությունները որոնք նկատել են երեխայի մոտ: Ուսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանիքները տարբեր են, և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

➢ **Կրել ընդհանուր պատասխանատվություն**: Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը տանը և դպրոցում ծագած խնդիրների լուծման ժամանակ՝ սահմանելով հստակ նպատակներ, ռազմավարություններ և ձգտելով միևնույն արդյունքին:

➢ **Լավատես լինել:** Ծնողների և ուսուցիչների փոխհարաբերությունները կառուցվում են լավատեսության հիմքի վրա: Երբ ուսուցիչը հաղորդակցվում է ընտանիքի անդամի կամ սովորողի հետ, անհրաժեշտ է խոսակցությունը սկսել դրական, լավատեսական նոտայով:

➢ **Պահպանել ջերմ հարաբերություններ:** Դպրոցը երկար ճանապարհ է անցնում ծնողների հետ, ուստի պետք է փորձել պահել ջերմ բարիդրացիական հարաբերություններ: Եղեք ընդունող և աջակցող յուրաքանչյուր դժվարին իրավիճակում, ուսուցիչը պետք է առաջարկի իր աջակցությունը ծնողին :

➢ **Խթանել և քաջալերել:** Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր, պետք է լսել ծնողի առաջարկները , ուսուցումն արդյունավետ կազմակերպել ու իր մոտեցումները : Խթանեք, որպեսզի ծնողներն առաջարկեն օգնության իրենց տարբերակները, կիսվեն ձեզ հետ իրենց կողմից արձանագրած հաջողություններով :

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ներկայումս առաջնային կարևորություն է ձեռք բերել երեխայի դաստիարակության կազմակերպումը դպրոցի և ընտանիքի սոցիալական գործընկերության հիմքով:

Երեխայի դաստիարակության գործում մարդասիրական միջավայրի ստեղծման անհրաժեշտությունն ուսուցիչների և ծնողների առջև նոր խնդիրներ է դնում անհրաժեշտ մանկավարժական գործողությունների ընտրության հարցում: Ընտանիքը և դպրոցը հավասարապես պատասխանատու և շահագրգիռ են յուրաքանչյուր

դպրոցի և ընդհանրապես կրթության տարածաշրջանային համակարգի աշխատանքի որակի համար:
Դպրոցի մանկավարժական խորհրդի գործունեության արդյունավետությունը որոշվում է ծնողների հետ տարվող աշխատանքի կազմակերպման հմտություններով: Ծնողների իրավունքը և պարտականությունն է՝ դպրոցին տեղյակ պահել երեխաների խնամքին և կրթությանն առնչվող իրենց որոշումների մասին:
Անհրաժեշտ է խրախուսել ծնողների մասնակցությունը երեխաների կրթության գործին: Ուսուցիչները պարտավոր են մշտապես կապ հաստատել իրենց սաների ընտանիքների հետ: Ընտանիքը՝ որպես սոցիալական իստիտուտ, երեխայի դաստիարակության դաշտում պատասխանատու տեղ է զբաղեցնում: Յուրքանչյուր ընտանիք հասարակության մեկ մասնիկն է՝ կապերի լայն համակարգով: Դաստիարակության ոլորտում դպրոցի ամենալավ գործընկերն ընտանիքն է: Ընտանիքի և դպրոցի դաստիարակչական մոտեցումների միասնականությունը կտա ցանկալի արդյունք:
Արդյունավետ համագործակցության դեպքում ընտանիքը, մասնավորապես՝ ծնողները, ակտիվորեն մասնակցում են երեխայի կրթության գործին: Դրա համար անհրաժեշտ է դպրոցի ղեկավավարության և ծնողների փոխադարձ համաձայնությունը, որից շահում են թե՛ երեխան, թե՛ ընտանիքը և թե՛ դպրոցը:
Երբ երեխան ամեն օր ել ու մուտ է անում իրարից տարբեր երկու աշխահներ՝ դպրոց և տուն՝ երկփեղկվելով ընտանիքի՝ ոչ ֆորմալ կրթության, դպրոցի՝ ֆորմալ կրթության միջև, ավելի կրթված ու սիրված է դառնում: Դպրոցի և ընտանիքի համագործակցությ - ունը երեխայի մեջ ապահովության զգացում է ձևավորում, երբ ընտանիքի անդամը դրական մասնակցություն է ունենում երեխայի դպրոցական կյանքին, նույնիսկ եթե այդ մասնակցությունը կարճատև է և ոչ հաճախակի, երեխայի ինքնահարգանքը մեծանում է: Նման դրական մասնակցությունը երեխային վստահություն է ներշնչում, որ իր ընտանիքը հավանություն է տալիս տան աշխարհից լիովին տարբերվող այն մյուս աշ - խարհին, որտեղ ինքը անցկացնում է դպրոցական տարվա բոլոր օրերը:

**Ի՞նչ են շահում երեխաները դպրոցական կյանքին ընտանիքի մասնակցության արդյունքում.**

➢Անհատական վերաբերմունքի ավելի մեծ հավանականություն՝ դասարանում շատ մեծահասակների շնորհիվ:
➢Տարբեր մշակույթներ ներկայացնող ընտանիքների հետ հաղորդակցման հնարա-վորություն:
➢Դպրոցի նկատմամբ ձևավորվում է առավել դրական վերաբերմունք, երբ երեխան ականատես է լինում ծնողների ու մանկավարժական կոլեկտիվի համատեղ աշխա-տանքին:
➢Ուսուցչից բացի այլ մեծահասակների հեղինակության ընդունում և գնահատում:

**Ի՞նչ են շահում ուսուցիչներն ու դպրոցը.**

➢Դասարանում յուրաքանչյուր երեխայի վրա ավելի քիչ ժամանակ է ծախսվում:
➢Ծնողների նախասիրությունները, ձիրքերն ու գիտեելիքներն ինտեգրվում են դպրոցական կյանքու մ:
➢Դպրոցում սովորածն ամրապնդվում է տնային աշ խատանքների միջոցով:
➢Ծնողները մասնակցում են դպրոցում որոշումներ կայացնել ու գործին:

**Ի՞նչ է շահում ընտանիքը**.

- Հասակակիցների հետ սեփական երեխաների փոխհարաբերությունների դիտարկումը ծնողներին թույլ է տալի խոր ըմբռնել երեխայի զարգացման հետ կապված հարցերը: Միևնույն ժամանակ առավել դյուրին է դառնում երեխային տանը դաստիարակելը:

➢Ծնողները կարողանում են իրապես գնահատել սեփական երեխաների նվաճումները և ավելի բավարարված են զգում իրենց:

➢Ծնողներն ավելի խորությամբ են ըմբռնում կրթական գործընթացը:

Ուսուցիչները պետք է լինեն նախաձեռնող և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Նրանք պետք է մտածեն ու մշակեն ընտանքի անդամների հետ աշխատելու ռազմավարություններ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են դրսևորում իրենց դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը ներգրավված է ուսումնական գործընթացին: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակու մ է միասնական անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավման ուղղությամբ ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտների առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի ուսումնական գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում են սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Ծնող–դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Այդ կապը ավելի կզարգացնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ (համակարգիչ, հեռախոսով կարել ի է ծնողների հետ քննարկումները իրականացնել հեռավար):

Ուսուցիչը, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները, կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն՝ շաբաթական կամ ամսական մի քանի անգամ:

**Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության և դաստիարա- կության համատեքստում.**

Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոնել երեխայի կրթության վրա ազդելու ամենա - օպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին:

Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյ ալ սկզբունքներով՝

➢Ժողովների ժամանակ որոշել առավել կարևոր խնդիր, որը վերաբերվում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:

➢Կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև, որպեսզի բոլոր ծնողները լավ տեսնեն և լսեն միմյանց:

➢Ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության խթանման խմբային ձևեր:

➢Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հետևել առավել մեծ կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձին, ծնողական խորհրդի անդամների և դպրոցի խորհրդի անդամների տեսակետներին :

**Ծնողական ժողովների ժամանակ դասղեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.**

➢Հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողների հետ հանդիպելուց առաջ:
➢Խոսքի, ինտոնացիայի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրությու ն նրանց հանդեպ:
➢Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:
➢Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է , որ բոլոր աշակերտների, այդ թվում (ռիսկային խմբի) ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:
➢Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաները դաստիարա - կության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա: Ուսումնական տարվա նախաշեմին գերադասելի է տեղեկանալ ընտանիքի տիպի, ծնողների կրթական, սոցիալական դիրքի մասին: Այս տեղեկութուն-ները կարել ի է ձեռք բերել երեխայի ծնողներից որևէ մեկի հետ զրուցելու միջոցով: Փորձել ստանալ ծնողի կարծիքը՝ երեխայի բնավորության, նրա հոգեբանաֆիզիոլո-գիական առանձնահատկությունների և նախասիրությունների վերաբերյալ : Հետաքրքրվել, թե ինչո՞վ է նա գերադասում զբաղվել ազատ ժամանակ, ու ՞մ հետ է ընկերություն անում և այլն: Այցելել որոշ երեխաների տուն: Այցելության ժամանակ ուշադրություն դարձնել երեխայի կյանքի պա ամաններին, որտե՞ղ է քնու մ, հատկացվա՞ ծ է նրան առանձին անկյուն, ունի՞ արդյ ոք գրքեր, խաղալիքներ և այլն: Երեխայի ընտանիքի հետ առաջին շփումը կարևոր է ոչ միա ն ուսուցիչների, այլև ծնողների և հենց երեխաների համար: Ծնողների և ուսուցչի շփման գործընթացում առավել կարևորվու մ է առաջին ծնողական ժողովը: Հարկավոր է ծնողներին իրազեկել երեխայի ուսումնառության, նրա հաջողությունների և թերացումների մասին: Կարևոր է պարբերաբար կազմակերպել երեխայի դաստիարակության խնդիրներին վերաբերվող տարբեր հարցերի քննարկումներ: Ծնողական ժողովներում շոշափել այնպիսի թեմա -ներ, ինչպիսիք են՝ «Դպրոցականի ուսուցումը և նրա առողջությունը», «Խրախուսումը և պատիժը», «Եթե երեխային դուր չի գալիս ուսուցումը … »:
Պարտավո՞ր է արդյոք ընտանիքն օգնել դպրոցին՝ աշակերտներին ուսուցանելու համար: Ուսուցանելու գործընթացի պատասխանատվությունը պետք է ստանձնի դպրոցը, իսկ դաստիարակե լու խնդիրները հարկավոր է լուծել միասին:
Որպես կանոն, ծնողները ցանկանում են արագ հասնել հաջողության: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր դժվարություն նրանց մղում է որոշակի գործողությունների՝ ուսուցիչ վարձել, տանը պարապել, խստացնել պահանջը և այլն:
Մեր խնդիրն է վերլուծել իրավիճակը և ծնողներին բացատրել աշակերտի անհաջո - ղությունների պատճառը: Դրանք հաճախ պայմանավորվում են երեխայի ուսուցման անհատական տեմպով ու եղանակով: Երեխան անպայման կսովորի, պարզապես գուցե նա քիչ ավելի դանդաղ կյուրացնի դասընթացը, քան ուրիշները: Անհրաժեշտ է ծնողներին հուշել, որ պետք է մշտապես լավատեսական մոտեցում դրսևորել երեխայի

նկատմամբ: Ծնողական ժողովների ժամանակ պետք է խոսել միայն երեխայի ձեռք բերած հաջողությունների մասին: Իսկ արդեն անհատական զրույցի ժամանակ կարելի է ծնողի ուշադրությունը սևեռել այս կամ այն խնդիրներին: Ծնողներին հարկավոր է խորհու րդներով օգնել, որպեսզի նրանք իրենց հերթին կարողանան ուղղել երեխայի սխալները: Ծնողի հետ պետք է խոսել ոչ թե երեխայի անհաջողությունների , այլ նրան խանգարող դժվարությունների մասին: Եթե ուսուցիչը ծնողի հետ առանձին խոսակցություն է վարում, ապա դա պետք է լինի մտերմիկ զրույց , որ երբեք չի վիրավորում ո՛չ ծնողին, ո՛չ երեխային:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Պետք է օգտագործել ընտանիքի հետ համագործակցելու և երեխային խրախուսելու ամեն մի հնարավորություն: Նույնը հարկավոր է խորհուրդ տալ ծնողներին: Ընտանիքի անդամները պետք է խուսափեն պատժելու, քննադատելու, և վարկաբեկելու մարտա - վարությունից:

Պետք է բացատրել ընտանիքին, որ անվերջ քննադատությունը վտանգավոր է և կարող է վնաս հասցնել երեխայի հոգեկան առողջությանը: Դրական հույզերը և խրախուսող վերաբերմունքը անհրաժեշտ են կրտսեր դպրոցականին, որպեսզի նրա առօրյան ուրախություն և հաճույք պատճառի իրեն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում եկանք այն համոզման, որ ուսուցչի, սովորողի, ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա, և չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները:

Այպիսով, ելնելով մեր դպրոցի իրականացրած ծնող-դպրոց համագործակցությունից, վերանայելով արդյունքները, կատարեցինք դիտարկումներ, որոնք կներկայցնենք ստորև :

- Համգործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության վրա:
- Ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագոր-ծակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է:
- Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթ-ները:
- Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրնրն ու սովորողների՝ տարիքային

առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:

• Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:

• Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է, որ կիսվի ծնողների հետ:

• Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու գիտակցումը:

«Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև»:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ս. Մարության, Ա. Դալլաքյան, նախադպրոցական մանկավարժություն, Եր.,2008:

2. Ա..Արզումանյան Ս.Ջ, Հոգեբանություն, Երևան, 2002:

3. Ա.. Ա. Սեդրակյան, Ընտանիքի հոգեբանություն:

4. Ա. Նալչաջյան, Ընտանիքի հոգեբանություն:

5. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Սահակյան « Մանկավարժություն-Երևան., 2005թ.

6. «Մանկավարժական միտք»ամսագիր, 2014(1-2)

7. «Ընտանիք և դպրոց» -2013-2, 2013-5,, 2014(1-2)

8. «Մանկավարժություն¦ամսագիր» 2009 (1-2):

9. «Նախաշավիղ»-6, 2009, «Նախաշավիղ»(-4, 2016):

10. « Նախաշավիղ »- 6, 2009:

11. СухомлинскийВ.А., Овоспитании. М.: Политиздат, 1985.

12. Зверьева О.Л. ,,Школародителей, 1994 г